Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Գ.Ս.ԽՈՒԴԻՆՅԱՆ

Հ.Յ. Դաշնակցության (այսուհետև՝ ՀՅԴ) ռազմավարական նպատակները առաջին անգամ ձևակերպվել են կուսակցության հիմնադիր (1890թ. հուլիսի երկրորդ կես-օգոստոս) և առաջին ընդհանուր ժողովներում, «Դրոշակի» երեք թռուցիկ թերթերում, «Դրոշակ» պաշտոնաթերթի առաջին համարներում հրապարակված ծրագրային հոդվածներում, ինչպես նաև այդ ժողովների ու տեսական բնույթի քննարկումների ամփոփումն ու ամբողջացումը հանդիսացող ՀՅԴ առաջին (1892թ.) ծրագրում[1]:

Արդեն ՀՅԴ հիմնադիր ժողովները ցույց տվեցին, որ նոր ձևավորվող կուսակցությունն առաջնորդվում է մի կողմից՝ գործուն, մյուս կողմից՝ համընդգրկուն կամ համազգային ռազմավարություն մշակելու և դրա հիման վրա՝ ողջ ազգի ներուժը համախմբելու հրամայականով: Այդ պատճառով, ՀՅԴ Մանիֆեստում առաջադրված «...բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եվ դաշնակցութեան...»[2] խնդիրը նորաստեղծ կուսակցության համար ոչ թե նպատակ էր, այլ միջոց՝ արդեն իսկ Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում ձևակերպված համազգային ռազմավարական նպատակին հասնելու ճանապարհին, որը ՀՅԴ-ն բանաձևում էր որպես «...թիւրքաց Հայաստանի քաղաքական եվ տնտեսական ազատութիւնը...»[3] նվաճելու անհրաժեշտություն: Ուշադրություն էր գրավում այն փաստը, որ նորաստեղծ ՀՅԴ-ի կողմից ողջ ազգը միավորող նպատակի բանաձևումն իրականացվում էր՝ հաշվի առնելով դրան հասնելու ներքին և մանավանդ արտաքին պայմանների հասունացած լինելու աստիճանը: Դա խոսում էր այն մասին, որ ՀՅԴ հիմնադիրները խորապես գիտակցում էին հայ ազատամարտին բնորոշ իդեալի և իրականության այն ողբերգական հակաթեզի առկայությունը, որը պայմանավորված էր ինչպես ներքին պատճառներով (Արևմտյան Հայաստանի էթնիկ խայտաբղետությունը), այնպես էլ արտաքին հանգամանքներով (հարևան երկրների և առաջին հերթին Ռուսաստանի բացասական վերաբերմունքը Արևմտահայաստանի անկախացման հեռանկարների հանդեպ): Սակայն առաջադրվող ռազմավարական նպատակի առջև առկա խոչընդոտների հաշվառումը ամենևին էլ չէր նշանակում, թե ձևավորվող կուսակցությունը հաշտվելու է վերջիններիս գոյության փաստի հետ՝ իր պայքարի հաջորդ հանգրվաններում: Նման պայմաններում անխուսափելի էր դառնում քաղաքական պայքարի եղանակների գրեթե ողջ գունապնակի ընդունումը՝ ՀՅԴ-ի կողմից և դրանց հաջորդական կիրառումը՝ ելնելով կոնկրետ իրավիճակից և ուժերի հարաբերակցությունից: Այս փաստը ցույց է տալիս, որ ՀՅԴ-ն ի սկզբանե որևէ նոր խնդիր կամ նպատակ չէր դնում ազգի առջև, այլ փորձում էր ստեղծել արդեն իսկ առկա

---

[1] *Տե՛ս Մեր ծրագիրը, Դրոշակ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1894, N 10-11:*

[2] *Մանիֆեստ Հ.Յ.Դաշնակցութեան կամ Դրոշակի թռուցիկ թերթ, N 1, էջ 1:*

[3] *Նույն տեղում:*

նպատակին տեր կանգնելու համար անհրաժեշտ քաղաքական և կազմակերպական հնարավորություններ: Ուստի այդ նպատակն իրականանալի դարձնելու ճանապարհին առկա արգելքների հաշվառումը չէր կարող հիմք դառնալ նրանից հրաժարվելու և որպես կրոնական համայնք Թուրքիայում գոյատևելու համար, քանզի հենց այդ համայնքի առաջնորդը՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը, Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում բարձրացրել էր իր համայնքի քաղաքական կարգավիճակի փոփոխության խնդիրը, որը ճանաչվել էր մեծ տերությունների կողմից, սակայն մերժվում էր օսմանյան Թուրքիայի ջարդարարական քաղաքականության միջոցով: Նման պայմաններում արևմտահայությունը կանգնել էր իրեն պարտադրվող գոյամարտի առաջ: Դա նշանակում էր «Կռիւ ազատութեան համար, կռիւ գոյութեան համար»[4] մի միջավայրում, ուր արտաքին ու ներքին հզոր գործոնների ազդեցությամբ գոյության և ազատության խնդիրներն արդեն շաղկապված էին միմյանց՝ գտնվելով իրենցից շատ ավելի զորեղ արգելքների հանդիման, որոնք մերժում էին և՛ արևմտահայերի քաղաքական ներկայությունը Թուրքիայում (սուլթան Համիդ) և՛ Արևմտյան Հայաստանի անկախություն ձեռք բերելու իրավունքը (ցարական Ռուսաստան և այլ տերություններ): Նման պայմաններում ձևավորվող ՀՅԴ-ին մնում էր 3-րդ՝ միջանկյալ տարբերակի որդեգրումը, որի վրա էլ կառուցվեց կուսակցության ռազմավարությունը: Դա արևմտահայերի ազատագրության խնդիրը հետապնդելու ճանապարհին առկա արգելքներին համապատասխանող չափավոր նպատակների սահմանումն էր և այդ պահանջների սանդղակի աստիճանական բարձրացումը: Նման խնդրի լուծման ՀՅԴ բանաձև դարձավ «Ազատ Հայաստան» հասկացությունը՝ իր մեջ առկա երկու շերտերի զուգահեռ գոյակցությամբ. «քաղաքական ազատութիւն», այսինքն՝ օտարի ճնշումից ազատվելու հնարավորություն, որի իրականացման համար բավարար պայման էր համարվում «...ինքնավարութիւն ստանալը...»[5], ինչպես նաև դեմոկրատական ազատությունների նվազագույն չափաբաժնի (հավասար ընտրական իրավունք, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և այլն) ձեռքբերումը: Խիստ չափավոր ու միանգամայն իրատեսական էր նաև «տնտեսական ազատութիւն» հասկացության մեջ ներառվող բարեփոխումների համալիր ծրագիրը, որը նախատեսում էր ազատել հայ գյուղացիներին ավատական բնույթի հարաբերությունների ճնշող ազդեցությունից (օլամի, կոռ ու բեկարի վերացում), հնարավորություն էր տալիս ձեռք բերել հող և, միաժամանակ, պայմաններ էր ստեղծում ապագայում սոցիալիստական հարաբերություններին անցնելու համար, քանզի ՀՅԴ 1892թ. Ծրագրի 11-րդ կետը նախատեսում էր «Ոյժ տալ գիւղացու և արհեստավորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական և պատմական հանգամանքների ազդեցության տակ»[6]: Գոյություն ունեցող կապանքներից ազատվելու և ազգին զարգացման ճանապարհ դուրս բերելու ՀՅԴ ռազմավարությունը իր խորքում միաժամանակ պարունակում էր և՛ անկախության հասնելու, և՛ սոցիալիստական հարաբերությունների հաստատման հեռահար նպատակները, քանի որ տնտեսական

[4] Դրոշակի թռուցիկ թերթ, 1891, N2, էջ 1:
[5] Դրոշակ, 1894, N 10, VIII, էջ 3:
[6] Նույն տեղում, 1894, N9, էջ 2:

և քաղաքական ազատության պահանջն առաջադրվում էր ոչ թե ողջ Օսմանյան կայսրության, այլ միայն ու միայն Արևմտյան Հայաստանի համար: Այսպիսով, ՀՅԴ-ն իր հիմնադրման օրվանից, սկզբունքով անկախական և միաժամանակ՝ սոցիալիստական կուսակցություն էր, բայց հանդես էր գալիս որպես չափավոր-ազգային (ինքնավարություն) և համամարդկային (տնտեսական կացության բարվոքում) պահանջներով: ՀՅԴ-ի ռազմավարության մեջ առկա քաղաքական պրագմատիզմն իր բարեփոխական և հեղափոխական տարրերի ամբողջությամբ հանդերձ, արտացոլում էր ազգի համախմբման և որոշակի տարածքի վրա ինքնորոշվելու օբյեկտիվորեն հասունացած և իր լուծումը պահանջող խնդիրը: Հրաժարվել այդ խնդրից հայությունը չէր կարող, բայց արտաքին շատ ավելի զորեղ ուժերին դիմակայելու հնարավորություն նա դեռևս չուներ: Նման պայմաններում Օսմանյան կայսրությունում արևմտահայերի քաղաքական ներկայության փաստը ժխտելու և ջարդերի ու ցեղասպանության միջոցով Հայկական հարցը լուծելու թուրքական քաղաքականությանը դիմակայող ՀՅԴ ռազմավարությունը ազգովին վերապրելու, որոշակի տարածքում համախմբելու և անկախություն ձեռք բերելով՝ ամբողջական հայրենիքի ճակատագրին տեր կանգնելու միակ ճանապարհն էր:

Այսպիսով, 1890-ականների առաջին կեսին ՀՅԴ որդեգրած ռազմավարությունը հիմնված էր ոչ թե հայ ժողովրդին նոր նպատակներ առաջարկելու, այլ արդեն իսկ առկա խնդրի լուծման համար սկսված պայքարի շուրջ նրան համախմբելու պրագմատիկ հաշվարկի վրա: Ուստի «Ազատ Հայաստան» ՀՅԴ ռազմավարական նպատակի իրականացմանը ի վերջո հնարավոր չեղավ խոչընդոտել անգամ Մեծ եղեռնի կազմակերպման միջոցով, որից հետո ձևավորվեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը շարունակեց մնալ ցեղասպանության ենթարկված ժողովրդի անժամանցելի իրավունքը:

ПОЛИТИЧЕСКАЯ СТРАТЕГИЯ АРФ ДАШНАКЦУТЮН В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ 1890-Х ГОДОВ

Г.С.ХУДИНЯН

Резюме

В первой половине 1890-х гг. АРФД руководствовался стратегией достижения политической автономии и осуществления первостепенных и насущных экономических реформ в Западной Армении. АРФД не сформировал новые стратегические задачи для армянского национально-освободительного движения, а лишь путем обьединения всех сил и средств армянского народа стремился достичь постепенного и поэтапного осуществления международно признанных прав западных армян.